Հաշմանդամություն ունեցող երեխաների հանդեպ վերաբերմունքը Հայաստանում

unicef

ՍԻՎԻԼԻԹԱՍ THE CIVILITAS FOUNDATION

Երևան 2014

Հաշմանդամություն ունեցող երեխաների հանդեպ վերաբերմունքը Հայաստանում

unicef

ՍԻՎԻԼԻԹԱՍ ՀԻՍՆԱԴՐԱՄ THE CIVILITAS FOUNDATION

Երևան 2014

Հաշվետվությունը պատրաստել են Լիլիթ Աբովյանը, Սերոժ Ալավերդյանը, Բելլա Կարապետյանը, Գրիգոր Հակոբյանը, Գայանե Ղուկասյանը, Դիանա Մուրադովան, Անի Նավասարդյանը, Լիլիկ Ստեփանյանը՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի փորձագիտական աջակցությամբ:

© ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2014 թ.

Լուսանկարներ՝ «Հույսի կամուրջ» ՀԿ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Ջակոմո Պիրոցի, Կարիտաս, Հասմիկ Հայրապետյան

Սույն հրապարակման մեջ արտահայտված տեսակետները կարող են չարտացոլել ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի տեսակետները և քաղաքականությունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂԵՐՁ 5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6
ՀԱԿԻՐՃ ԱՄՓՈՓՈՒՄ 8
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 10
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ 11
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԱՑՈՒՄ 13
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 16
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ 19
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 23
ՀԱՎԵԼՎԱԾ 2: ՀԱՐՑԱՇԱՐ 25
ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ 27

ՈՒՂԵՐՁ

Ամբողջ աշխարհում հաշմանդամություն ունեցող երեխաները հասարակության ամենախոցելի և մեկուսացված խմբերից են: Ամեն օր՝ առերեսվելով խտրականության հետ, որն արտահայտվում է թե՛ բացասական վերաբերմունքով, թե՛ պատշաճ քաղաքականության և օրենսդրության բացակայությամբ, նրանք չեն կարողանում իրացնել իրենց իրավունքները առողջապահության, կրթության և համայնքային այլ ծառայությունների ոլորտներում:

Չնայած կառավարության և քաղաքացիական հասարակության շնորհիվ Հայաստանը նշանակալի առաջընթաց է արձանագրել այս ոլորտում՝ անհամաչափությունն ու անհավասարությունը դեռևս գերիշխում են: Հայաստանում հաշմանդամություն ունեցող մի քանի հազար երեխաներ դեռևս մեկուսացված են իրենց ընտանիքներից, հասակակիցներից և համայնքից, քանի որ նախակրթարան կամ դպրոց չեն գնում, վերականգնողական ծառայություններից օգտվելու հնարավորություն չունեն և չեն մասնակցում համայնքային միջոցառումներին:

Հաշմանդամություն ունեցող երեխաների հանդեպ դրական վերաբերմունք ստեղծելը նույնքան կարևոր է, որքան թեքահարթակների կառուցումն ու տեխնիկական միջոցներով ապահովելը: Հաշմանդամություն ունեցող երեխաների համար քաղաքականությունն ու ծրագրերն ավելի արդյունավետ են այն հասարակությունում, որը կարևորում է ներառման արժեքը և հարգանքը բազմազանության հանդեպ: Անշուշտ, հասարակության կարծիքը ինքնիրեն չի փոխվում: Մարդիկ ավելի շատ պետք է առնչվեն հաշմանդամություն ունեցող մարդկանց հետ և մշտական շփման մեջ լինեն, որպեսզի արժևորեն վերջիններիս՝ որպես հասարակության լիարժեք անդամներ և հարգեն նրանց իրավունքները:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը միանում է Հայաստանի կառավարության և հասարակության ջանքերին՝ խթանելու սոցիալական ներառումը և կրթության հասանելիությունը բոլոր երեխաների համար: Մեր մոտեցման հիմքում ընկած է իրավունքների հանդեպ հարգանքը, բոլոր երեխաների ձգտումներն ու ներուժը՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային համահունչ: Սա չի ենթադրում կենտրոնացում երեխային «փրկելու» ավանդական գաղափարների վրա, այլ ուղղված է վերացնելու ֆիզիկական, մշակութային, տնտեսական, հաղորդակցման, շարժունակության և վերաբերմունքային խոչընդոտները, որոնք խանգարում են երեխաների իրավունքների իրացմանը՝ ներառյալ նրանց ամենօրյա կյանքի վրա ազդող որոշումների կայացման ժամանակ ակտիվորեն ներգրավված լինելու իրավունքը:

Հաջորդ տարիներին մենք շարունակելու ենք հետևել հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ մարդկանց կարծիքի փոփոխությանը և հույս ունենք տեսնել ներառման գաղափարի կողմնակիցների աճ: Ավելի ու ավելի շատ մարդ կդադարի բնութագրել երեխաներին ըստ նրանց հաշմանդամության, այլ կտեսնի մարդ էակին իր կարողություններով, հույսերով ու երազանքներով:

Հենրիետ Արենս
ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի
հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ստորագրելով «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» (ՀՈՒԱԻ) ՄԱԿ-ի կոնվենցիան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորություն է ստանձնել աջակցել, պաշտպանել և ապահովել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիարժեք կիրառումը հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար: Կոնվենցիան ոչ միայն հաստատում է հաշմանդամության սոցիալական մոդելը, այլև այն նոր մակարդակի վրա է դնում՝ «հստակ ճանաչելով հաշմանդամությունը որպես մարդու իրավունքների խնդիր: Այս տեսանկյունից սոցիալական, իրավական, տնտեսական, քաղաքական և միջավայրային պայմանները, որոնք խոչընդոտում են հաշմանդամություն ունեցողներին՝ լիովին իրացնել իրենց իրավունքները, պետք է հայտնաբերվեն և հաղթահարվեն»: Ուստի Կոնվենցիան չի խրախուսում բարեգործական մոտեցումները, համաձայն որոնց հաշմանդամություն ունեցող երեխաները հանդես են գալիս որպես պասիվ խնամք և պաշտպանություն ստացողներ, փոխարենը պահանջում է ճանաչել յուրաքանչյուր երեխային որպես ընտանիքի, համայնքի և հասարակության լիիրավ անդամ:

Հայաստանում հաշմանդամություն ունեցող երեխաները դեռևս հասարակության մեկուսացված խմբերից են: Հաշմանդամություն ունեցող 8000 երեխա է գրանցված Հայաստանում, որը կազմում է երեխաների մեկ տոկոսը, իսկ իրական թիվը կարող է նշանակալիորեն բարձր լինել: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի՝ 2012թ. արված հետազոտությամբ պարզվել է, որ հաշմանդամություն ունեցող երեխաների 13 տոկոսն ապրում է հաստատություններում, 18 տոկոսը դպրոց չի գնում, 77 տոկոսը չի ստանում վերականգնողական որևէ ծառայություն, իսկ մեկ երրորդը չի մասնակցում որևէ համայնքային միջոցառման:

Ընտանիքի աջակցության և համայնքային վերականգնողական ծառայությունների բացակայությունը, ինչպես նաև հասարակության վերաբերմունքը, ստիպում է որոշ ընտանիքների իրենց երեխաներին մանկատուն հանձնել: Հայաստանում կա երեք պետական և մեկ մասնավոր մասնագիտացված մանկատուն հաշմանդամություն ունեցող երեխաների համար, մինչդեռ հետազոտությունները ցույց են տալիս, որ ինստիտուցիոնալացումն անբարենպաստ ազդեցություն է ունենում երեխաների վրա: Հայաստանը ներառական կրթության ոլորտում վերջին տասը տարում նշանակալի առաջընթաց է արձանագրել, բայց հանրակրթական դպրոցների ընդամենը 10 տոկոսն է պաշտոնապես ճանաչված որպես ներառական, դեռևս 22 հատուկ դպրոց կա՝ նախատեսված տարբեր հաշմանդամություն ունեցողների համար: Այնուամենայնիվ՝ կառավարությունը հանձն է առել ժամանակի ընթացքում այս հաստատությունները վերակազմակերպել համայնքահեն ծառայությունների:

Խարանը, մերժվածությունը, անտեսումը, սնահավատությունը և հաղորդակցության խոչընդոտները գործոններ են, որոնց հետ առնչվում են հաշմանդամություն ունեցող երեխաները: Նրանք կմեծանա՞ն ու կբարգավաճե՞ն, թե՞ հազիվհազ կգոյատևեն՝ կախված է շրջապատող մարդկանցից և միջավայրից: Հասարակության կարծիքը ճակատագրական դեր կարող է խաղալ այնպիսի միջավայր ստեղծելու հարցում, որը կարող է այս երեխաներին իրավունքների իրացման հնարավորություն տալ: Սոցիալական նորմերն ազդում են քաղաքականության ընտրության վրա և կարող են նպաստել կամ խոչընդոտել քաղաքականության և ծրագրերի իրականացմանը: Դրանք կարող են հանգեցնել սոցիալական փոփոխության և պարարտ հող դառնալ ներառման համար, ինչպես նաև ծրագրված քաղաքականության գործողություններին հաղորդել «լեգիտիմություն»: Իհարկե սոցիալական նորմերը դինամիկ են և իրենց հերթին ենթակա են ազդեցության՝ իրականացվող քաղաքականության և ծրագրերի, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների կողմից:

Սույն հաշվետվության նպատակն է ուսումնասիրել Հայաստանի հասարակության մեջ գերիշխող վերաբերմունքը հաշմանդամություն ունեցող երեխաների հանդեպ և հիմք ստեղծել՝ ժամանակի ընթացքում սոցիալական նորմերի փոփոխությունը չափելու համար: Այս հաշվետվությունը կենտրոնանում է

հաշմանդամություն ունեցող երեխաների ամենօրյա կյանքի երեք հիմնական կողմի վրա. ինստիտուցիոնալացում, կրթություն և մասնակցություն: Այն ներկայացնում է տվյալներ, որոնք վերլուծվել են ըստ հարցվածների տարիքի, բնակության վայրի, կրթության աստիճանի և սեռի:

Եզրահանգումները Հայաստանի Հանրապետության կառավարության, միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաների, նրանց ընտանիքների և համայնքների համար արժեքավոր աղբյուր են՝ հասկանալու գոյություն ունեցող սոցիալական նորմերը:

Այս հաշվետվությունը կարող է օգտագործվել ոչ միայն հանրային ուղերձներ մշակելու, այլև հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառումը խթանելու և նրանց իրավունքները պաշտպանելու մարտավարության ու ծրագրերի մշակման ժամանակ:

«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱ

(ա) հարգանք արժանապատվության, անհատի ինքնուրույնության, ազատ ընտրության և անձի անկախության իրավունքի նկատմամբ

(բ) խտրականության բացառում

(գ) հանրային կյանքում լիակատար և արդյունավետ մասնակցություն և ներգրավվածություն

(դ) հարգանք հաշմանդամություն ունեցող անձանց յուրահատուկ լինելու նկատմամբ և նրանց՝ որպես մարդկային բազմազանության և մարդկության մաս ընդունելը

(ե) հնարավորությունների հավասարություն

(զ) մատչելիություն

(է) հավասարություն տղամարդկանց և կանանց միջև

(ը) հարգանք հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացող հնարավորությունների նկատմամբ և հարգանք հաշմանդամություն ունեցող երեխաների՝ իրենց ինքնությունը պահպանելու իրավունքի նկատմամբ:

ՀԱԿԻՐՃ ԱՄՓՈՓՈՒՄ

2013 թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը և Սիվիլիթաս հիմնադրամն անցկացրել են Հայաստանի բնակչության համապատասխան ներկայացուցչական հեռախոսային հարցում՝ նպատակ ունենալով բացահայտել ֆիզիկական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների հանդեպ հիմնական վերաբերմունքը և ստեղծել ելակետային հիմք՝ ժամանակի ընթացքում հասարակության կարծիքի փոփոխությունը չափելու համար:

Հայաստանում բնակվող 1,065 մարդկանց պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած ընդհանուր առմամբ հանդուրժողական մոտեցում կա հաշմանդամություն ունեցող երեխաներին հասարակության մեջ ներգրավելու և ընդհանուր կրթական հաստատություններում ընդգրկելու գաղափարի հանդեպ, հանդուրժողականության աստիճանը կախված է հաշմանդամության տեսակից՝ ֆիզիկական, թե մտավոր:

Հարցվածների գերակշիռ մասը կարծում է, որ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխան պետք է ներգրավված լինի հասարակության մեջ: Սակայն այս ցուցանիշը նշանակալիորեն նվազում է մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների դեպքում: Այս դեպքում հարցվածների մոտ մեկ երրորդը կարծում է, որ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաները պետք է հասարակությունից առանձնացվեն: Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխաները պետք է հաճախեն հանրակրթական, թե՞ հատուկ դպրոց. այս հարցի շուրջ կարծիքները կիսվել են: Ինչ վերաբերվում է մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաներին՝ հարցվածների մեծ մասը (87 տոկոս) կարծում է, որ նրանք պետք է հաճախեն հատուկ դպրոց:

Ամենաորոշիչ գործոնները, որոնք մեծ ազդեցություն ունեն հաշմանդամություն ունեցող երեխաների հանդեպ վերաբերմունքի վրա, հարցվածների տարիքը, կրթության աստիճանը և բնակության վայրն են (քաղաք/գյուղ): Զարմանալիորեն՝ մեծ տարբերություն չկա պատասխանների մեջ՝ ըստ հարցվածի սեռի:

Տարիքը հակադարձ համեմատական է ընկալունակության և հանդուրժողականության մակարդակի հետ: Հարցվածների ավելի երիտասարդ մասն ավելի համամիտ են հաշմանդամություն ունեցող երեխաներին հասարակությունում, համայնքում և դպրոցում ներգրավելուն՝ թե՛ ֆիզիկական, թե՛ մտավոր հաշմանդամության դեպքում: Նրանք նաև բաց են այն գաղափարի հանդեպ, որ իրենց երեխայի դասարանում կարող է լինել հաշմանդամություն ունեցող աշակերտ: Սա դրական միտում է, որը ցույց է տալիս նոր սերնդի բաց լինելը և ազդանշան է, որ սոցիալական փոփոխության համար հիմք կա:

Կրթության մակարդակի և հաշմանդամության հանդեպ վերաբերմունքի միջև հարաբերակցությունը կախված է հաշմանդամության տեսակից: Որքան բարձր է կրթության աստիճանը՝ այնքան հարցվածն ավելի ընդունելի է համարում ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխայի ներառումն ու ներգրավումը: Մտավոր հաշմանդամության պատկերը հակառակն է՝ որքան բարձր է հարցվածի կրթության աստիճանը, այնքան ավելի քիչ է նա կարծում, որ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաները պետք է ներգրավված լինեն հասարակության մեջ: Այս միտումներն արտահայտվում են համարյա բոլոր հարցերի դեպքում:

Ըստ քաղաք/գյուղ տարանջատման՝ պատասխանների տարբերությունն ավելի քիչ է: Համարյա տարբերություն չկա կամ շատ քիչ տարբերություն կա այն հարցերի պատասխանների շուրջ, որոնք վերաբերում են հասարակության մեջ ինտեգրմանը՝ հաշմանդամության երկու տեսակի դեպքում էլ, ինչպես նաև դասարանային կամ ընկերական փորձին՝ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների դեպքում: Սակայն գյուղաբնակ հարցվածները համեմատաբար պակաս բարենպաստ վերաբերմունք ունեն, քան քաղաքաբնակ հարցվածները, երբ նույն հարցերը վերաբերվում են ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխաներին:

Ամենամեծ քաղաք/գյուղ տարբերությունը երեխաներին մանկատուն հանձնելն ընդունելի համարելու հարցն է: Եվ մտավոր, և՛ ֆիզիկական հաշմանդամության դեպքում գյուղաբնակ հարցվածները քաղաքաբնակներից ավելի ընդունելի են համարում, որ ծնողներն իրենց երեխային հանձնեն մանկատան խնամքին:

«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱ

Հոդված 1. Նպատակը

Սույն Կոնվենցիայի նպատակն է աջակցել, պաշտպանել և ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց՝ լիարժեքորեն և հավասարապես օգտվել մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից, ինչպես նաև ապահովել հարգանքը նրանց արժանապատվության նկատմամբ: Հաշմանդամություն ունեցող անձինք են համարվում նրանք, ովքեր երկարաժամկետ ֆիզիկական, հոգեկան, մտավոր կամ զգայական ոլորտի խանգարումներ ունեն, որոնք տարբեր արգելքների հետ փոխազդեցության արդյունքում կարող են խոչընդոտել նրանց լիակատար և արդյունավետ մասնակցությանը հասարակական կյանքին՝ մյուսների հետ հավասար հիմունքներով:

Հոդված 2. Սահմանումները

Սույն Կոնվենցիայի նպատակներով. «Հաղորդակցում»-ը ներառում է լեզուները և տեքստերը, Բրայլի համակարգը, շոշափման միջոցով հաղորդակցումը, խոշոր տառատեսակները, տեղեկատվության մատչելի ու բազմազան միջոցները (մուլտիմեդիաները), ինչպես նաև տպագիր նյութերի, լսողական միջոցների, դյուրըմբռնելի լեզվի, ընթերցողների, նաև հաղորդակցության ուժեղացուցիչ և այլընտրանքային մեթոդների, միջոցների ու ձևաչափերի, այդ թվում՝ տեղեկատվական և հաղորդակցական մատչելի տեխնոլոգիաների կիրառումը:

«Լեզու»-ն ներառում է խոսակցական և շարժուձևերի լեզուն, ինչպես նաև ոչ խոսակցական լեզվի այլ ձևերը:

«Խտրականություն հաշմանդամության պատճառով» նշանակում է՝ հաշմանդամության պատճառով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որոնց նպատակն է սահմանափակել կամ նվազագույնի հասցնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչումը, կիրառումը կամ դրանցից օգտվելը քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ ցանկացած այլ ոլորտում՝ մյուսների հետ հավասար հիմունքներով: Այն ընդգրկում է խտրականության բոլոր ձևերը՝ ներառյալ անհրաժեշտ հնարավորությունների տրամադրման մերժումը:

«Անհրաժեշտ հնարավորություններ» նշանակում է՝ անհրաժեշտ հատուկ դեպքերում համապատասխան փոփոխությունների կամ շտկումների կատարում, որոնք չեն պահանջում անտեղի ջանքեր, ապահովելու համար հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից օգտվելն ու դրանց կիրառումը:

«Համընդհանուր ձևավորում» նշանակում է՝ ապրանքների, միջավայրերի, ծրագրերի ու ծառայությունների ձևավորում, որը դրանք առավելագույնս գործածելի է դարձնում բոլոր մարդկանց համար՝ առանց դրանց հարմարվելու կամ հատուկ ձևավորման անհրաժեշտության: «Համընդհանուր ձևավորում»-ն ընդգրկում է հաշմանդամություն ունեցող անձանց որոշակի խմբերի համար նախատեսված օժանդակող պարագաները դրանց անհրաժեշտության դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը և Սիվիլիթաս հիմնադրամը անցկացրել են հեռախոսային հարցում հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ հասարակության վերաբերմունքը պարզելու համար: Հարցումն անցկացվել է 2013 թ.-ի սեպտեմբերի 12-ից 16-ը: Հարցվածների թիվը 1,065 է՝ 18 տարեկանից բարձր, Հայաստանի բոլոր մարզերից:

Ընտրանքի մեթոդը սիստեմատիկ ընտրանքն է՝ նախնական շերտավորմամբ, սխալանքի 3.5 տոկոսից փոքր չափով: Շերտավորման մեթոդը բնակչության թվին համապատասխան բաշխվածությունն է ըստ մարզերի և դրանց քաղաքային ու գյուղական համայնքների: Յուրաքանչյուր մարզի համար կատարվել է պատահական ընտրանք քաղաքային և գյուղական ֆիքսված հեռախոսահամարների բազայից: Տնային տնտեսությունից հարցման համար ընտրվել է այն անդամը, որի ծննդյան օրը հարցման օրվանից հետո ամենամոտն է: Եթե ընտրված անձը տվյալ պահին բացակայել է տնից՝ ընտրվել է այն անդամը, որի ծննդյան օրը երկրորդ ամենամոտն է հարցման օրվան: Եթե այդ անդամն էլ է բացակայել, ապա իրականացվել են հետզանգեր՝ նույն հաջորդականությամբ տնային տնտեսության անդամի ընտրության համար:

Ընտրվել է 3,138 հեռախոսահամար, որի կեսը նախատեսված է եղել որպես լրացուցիչ ցուցակ՝ հետազոտությանը մասնակցելուց հրաժարվելու կամ հեռախոսահամարների անհամապատասխանության դեպքերում հնարավոր ռոտացիայի նպատակով: Պատահականության սկզբունքը պահպանվել է նաև համակարգի կողմից ներբեռնված հեռախոսահամարների գեներացման ժամանակ:

Հարցաշարը կազմել է Սիվիլիթաս հիմնադրամը՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի երևանյան գրասենյակի հետ համատեղ: Հարցումը ներառել է 22 վերաբերմունքային և չորս բնութագրող հարց, հաջողված հարցման միջին տևողությունը կազմել է 15 րոպե: Զանգերի որակի վերահսկողության նպատակով համակարգի միջոցով զանգերը ընտրողաբար ձայնագրվել են, հարցման անցկացման որակի ստուգման փուլում զանգերի 10 տոկոսի ձայնագրությունները ստուգվել են:

Աղյուսակ 1. Հարցվածների աշխարհագրական բաշխվածությունը

Մարզ	Ընդամենը հարցվածներ	Հարցվածները քաղաքային բնակչության մեջ	Քաղաքային բնակչություն (հարցվածների տոկոս)	Քաղաքային բնակչություն (տոկոս Հայաստանի բնակչությունից)	Հարցվածները գյուղական բնակչության մեջ	Գյուղական բնակչություն (հարցվածների տոկոս)	Գյուղական բնակչություն (տոկոս Հայաստանի բնակչությունից)
Արագածոտն	43	12	1.13	1.01	31	2.91	3.28
Արարատ	91	34	3.19	2.41	57	5.35	6.07
Արմավիր	60	37	3.47	2.77	23	2.16	5.89
Գեղարքունիք	77	28	2.63	2.34	49	4.60	5.22
Կոտայք	95	69	6.48	4.49	26	2.44	3.79
Լոռի	107	84	7.89	4.54	23	2.16	3.18
Շիրակ	101	80	7.51	4.88	21	1.97	3.40
Սյունիք	53	42	3.94	3.20	11	1.03	1.49
Տավուշ	56	20	1.88	1.79	36	3.38	2.40
Վայոց ձոր	24	5	0.47	0.61	19	1.78	1.12
Երևան	358	358	33.62	36.10			
Ընդամենը	**1065**	**769**	**72.21**	**64.16**	**296**	**27.79**	**35.84**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Աղյուսակ 1-ում ներկայացված է հարցվածների բաշխվածությունն ըստ մարզերի և բնակավայրի տեսակի:

Գծապատկեր 1-ում ներկայացված են հարցվածներն ըստ կրթական մակարդակի: Նրանց մեջ ամենաշատը բարձրագույն կրթություն ունեցողներն են, այնուհետև՝ միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն ունեցողները: Միջնակարգ կրթություն ունեցողների մեջ են նաև նրանք, որոնք ունեն միայն տարրական կրթություն կամ չունեն տարրական կրթություն (2 տոկոս):

1. Հարցվածներն ըստ կրթական մակարդակի



Հարցվածների տարիքային բաշխվածությունը ներկայացված է ստորև:

2. Հարցվածներն ըստ տարիքի



Հարցվածների 66 տոկոսը կանայք են, իսկ 34 տոկոսը՝ տղամարդիկ:

Հարցվածների 48 տոկոսն ասել է, որ իր ընտանիքում մինչև 18 տարեկան երեխա չկա, իսկ 52 տոկոսն ասել է, որ կա: Երեխա ունեցող ընտանիքների 63 տոկոսի դեպքում երեխան հարցվածի երեխան է, 21 տոկոսի դեպքում՝ հարցվածի թոռը, իսկ 12 տոկոսի դեպքում՝ հարցվածի քույրը կամ եղբայրը:

Հարցվածների մոտ կեսն ասել է, որ ճանաչում է ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդու: Մոտ 60 տոկոսն էլ նշել է, որ չի ճանաչում մտավոր հաշմանդամություն ունեցող որևէ մեկին, իսկ 45 տոկոսն էլ չի ճանաչում ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդու:

3. Դուք ճանաչո՞ւմ եք հաշմանդամություն ունեցող մարդու



4. Ճանաչելու դեպքում հաշմանդամի հետ կապը



Հարցվածների կեսը նշել է, որ ճանաչում է ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդու, դրանց շուրջ 30 տոկոսն ասել է, որ ունի ֆիզիկական հաշմանդամություն ունեցող ընտանիքի անդամ կամ բարեկամ: Մտավոր հաշմանդամություն ունեցող մարդու ճանաչողների 20 տոկոսի դեպքում այդ մարդը ընտանիքի անդամ կամ բարեկամ է: Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդու ճանաչողների մոտ 7 տոկոսի դեպքում այդ անձն ընտանիքի անդամն է, իսկ մտավոր հաշմանդամության դեպքում՝ այն 2 տոկոս է: Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդու ճանաչողների մոտ 20 տոկոսի դեպքում իրենց ճանաչած ֆիզիկական հաշմանդամություն ունեցողը հարևան է: Մտավոր հաշմանդամություն ունեցող մարդու ճանաչողների 30 տոկոսի դեպքում էլ իրենց ճանաչած մարդը հարևան է: 11 տոկոսի դեպքում ֆիզիկական հաշմանդամություն ունեցողն ընկերն է, իսկ մտավոր հաշմանդամություն ունեցողի ճանաչողների մեջ՝ 4 տոկոսն է ընկեր:

«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱ

Հոդված 5. Հավասարությունը և խտրականության բացառումը

1. Մասնակից պետությունները գիտակցում են, որ բոլոր անհատները հավասար են օրենքի առաջ և օրենքի համաձայն և իրավունք ունեն, առանց որևէ խտրականության, մյուսների հետ հավասար հիմունքներով պաշտպանված լինելու օրենքով և օգտվելու օրենքից:
2. Մասնակից պետությունները պետք է արգելեն հաշմանդամության պատճառով ցանկացած խտրականություն և ապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց հավասար և արդյունավետ իրավական պաշտպանվածությունը ցանկացած հիմքով խտրականությունից:
3. Հավասարության հաստատմանն աջակցելու և խտրականությունը վերացնելու նպատակով մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր քայլերը՝ ապահովելու համար անհրաժեշտ հնարավորությունների տրամադրումը:
4. Հատուկ միջոցառումները, որոնք անհրաժեշտ են հաշմանդամություն ունեցող անձանց փաստացի հավասարություն հաստատելու գործընթացն արագացնելու և դրան հասնելու համար, չեն համարվում խտրականություն՝ սույն Կոնվենցիայի պայմանների համաձայն:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԱՑՈՒՄ

Երեխայի՝ հասարակության մեջ լիովին ներգրավված լինելու իրավունքն ապահովելու համար հաշմանդամություն ունեցող երեխաները պետք է ներառվեն հասարակության մեջ: Այս իրավունքի շուրջ համաձայնությունը նախադրյալ կլինի դեպի ավելի արդար և համապարփակ հասարակական քաղաքականություն, հասարակական վայրերի մատչելիություն և հասարակական կյանքում հավասար հնարավորություններ:

Գրեթե բոլոր հարցվածները (95 տոկոսը) կարծում են, որ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխան պետք է լիովին ներգրավված լինի հասարակության մեջ: Մտավոր հաշմանդամության դեպքում՝ հարցվածների 63 տոկոսն է այդպես պատասխանել, իսկ 30 տոկոսը կարծում է, որ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխան պետք է հասարակությունից առանձնացվի:

5. Հետևյալ պնդումներից ո՞րն է ավելի լավ բնութագրում Ձեր կարծիքը



Այս հարցում տարիքային խմբերի մոտեցումները տարբերվում են: Մտավոր հաշմանդամության դեպքում 18-34 տարեկանների 75 տոկոսն է ասել, որ երեխան պետք է լիովին ներգրավված լինի հասարակության մեջ, 35-49 տարեկանների՝ 59 տոկոսը: 50-64 տարեկանների 52 տոկոսը և 65 ու բարձր տարեկանների 58 տոկոսն է կողմ լիովին ներգրավմանը: Ֆիզիկական հաշմանդամության դեպքում տարբերությունն այդքան մեծ չէ, երիտասարդ տարիքային խմբի 98 տոկոսն է կողմ հասարակության մեջ լիովին ներգրավմանը, 35-49 տարեկանների՝ 95 տոկոսը, 50-64 տարեկանների՝ 94 տոկոսը և 65 ու բարձր տարիք ունեցողների՝ 92 տոկոսը:

6. Հաշմանդամություն ունեցող երեխան պետք է լիովին ներգրավված լինի հասարակության մեջ



Քաղաքաբնակ և գյուղաբնակ հարցվածների պատասխաններն էականորեն չեն տարբերվում (*Տես գծապատկեր 9*):

Նկատելի է փոխկապակցվածություն՝ հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող երեխայի ներգրավված լինելու հարցի պատասխանի և հարցվածի կրթական մակարդակի միջև:

Կրթության մակարդակի բարձրացմանը զուգընթաց մեծանում է հարցվածների մասը, որը համարում է, որ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխան պետք է լիովին ներգրավված լինի հասարակության մեջ: Մտավոր հաշմանդամության դեպքում պատասխանների բաշխվածությունը հակառակն է. կրթության մակարդակի բարձրացմանը զուգընթաց նվազում է հարցվածների մասը, որը համարում է, որ երեխան պետք է լիովին ներգրավված լինի հասարակության մեջ:

7. Հաշմանդամություն ունեցող երեխան պետք է լիովին ներգրավված լինի հասարակության մեջ



Հարցմանը մասնակցածների կեսից ավելին միանգամայն ընդունելի չի համարում, որ ընտանիքները հանձնեն երեխային մանկատուն թե՛ ֆիզիկական (հարցվածների 66 տոկոս), թե՛ մտավոր (հարցվածների 54 տոկոս) հաշմանդամություն ունենալու պատճառով, իսկ 17–18 տոկոսը ավելի շուտ ընդունելի չի համարում երկու դեպքում էլ:

8. Որքանո՞վ է Ձեզ համար ընդունելի կամ ընդունելի չէ, որ ընտանիքները հանձնեն երեխային մանկատուն՝ հաշմանդամություն ունենալու պատճառով



Մինչև միջին մասնագիտական կրթություն ունեցողների 74 տոկոսը ընդունելի չի համարում, որ ընտանիքները երեխային հանձնեն մանկատուն մտավոր հաշմանդամության պատճառով, իսկ միջին մասնագիտական և բարձր կրթական մակարդակի դեպքում ավելի քիչ՝ 69 տոկոսն է «ընդունելի չէ» պատասխանը տվել (*Տ՛ես Հավելված 1-ի գծապատկեր Ա1*):

«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱ

Հոդված 23. Տան և ընտանիքի նկատմամբ հարգանքը

Մասնակից պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող երեխաներն օգտվեն ընտանեկան կյանքի իրավունքներից: Այս իրավունքներն իրականացնելու նպատակով, և որպեսզի կանխեն այնպիսի երևույթները, ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող երեխաներին թաքցնելը, լքելը, նրանց նկատմամբ պարտականությունները չկատարելը և խտրականության ենթարկելը: Մասնակից պետությունները պարտավորվում են հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին վաղ փուլում տալ սպառիչ տեղեկատվություն, մատուցել ծառայություններ և ցուցաբերել աջակցություն:

Երբ հաշմանդամություն ունեցող երեխայի ընտանիքն ի վիճակի չէ խնամելու նրան, մասնակից պետությունները քայլեր են ձեռնարկում նրան խնամելու այլընտրանքային միջոցներ տրամադրելու ուղղությամբ, մասնավորապես՝ հեռավոր հարազատների միջոցով, իսկ նման հնարավորություն չլինելու դեպքում՝ տվյալ համայնքում ապրող այլ ընտանիքում տեղավորելով:

Քաղաքաբնակ և գյուղաբնակ հարցվածների մոտ էական տարբերություն չկա երեխայի՝ հասարակության մեջ լիովին ներգրավվածությունն ընդունելի լինելու հարցի շուրջ: Համարյա բոլոր գյուղաբնակ և քաղաքաբնակ հարցվածները կարծում են, որ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխան պետք է լիովին ներգրավված լինի հասարակության մեջ, մոտ մեկ երրորդն է կարծում, որ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխան պետք է լիովին ներգրավված լինի հասարակության մեջ:

9. Հաշմանդամություն ունեցող երեխան պետք է լիովին ներգրավված լինի հասարակության մեջ



10. Ընդունելի է, որ ընտանիքները հանձնեն երեխային մանկատուն՝ հաշմանդամություն ունենալու պատճառով



Մտավոր հաշմանդամության դեպքում քաղաքաբնակ հարցվածների 21 տոկոսն է ընդունելի համարում, որ ընտանիքները երեխային հանձնեն մանկատուն, իսկ ֆիզիկական հաշմանդամության դեպքում՝ 9 տոկոսը: Մտավոր հաշմանդամության դեպքում գյուղաբնակ հարցվածների 27 տոկոսն է ընդունելի համարում, որ ընտանիքները երեխային հանձնեն մանկատուն, իսկ ֆիզիկականի դեպքում՝ երկու անգամ ավելի շատ, քան քաղաքաբնակների դեպքում՝ 18 տոկոսը *(Տե՛ս գծապատկեր 10)*:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Երեխաների պատկերացումները մարդկանց, կյանքի, իրավունքների, պատասխանատվության և հանդուրժողականության մասին ձևավորվում են դպրոցական տարիներին: Դպրոցում երեխայի տեղը՝ կյանքում նրա տեղի առաջին ցուցիչն է: Դպրոցում ներառված չլինելն ամենօրյա գործունեության մեջ և շփումներում՝ ներառված չլինելու առաջին քայլն է, ինչից էլ բաղկացած է կյանքը:

Հաշմանդամություն ունեցող երեխան պետք է հանրակրթական, թե՞ հատուկ դպրոց հաճախի հարցի պատասխանները տարբեր են եղել՝ կախված երեխայի հաշմանդամության տեսակից: Ֆիզիկական հաշմանդամության դեպքում կարծիքները գրեթե կիսվել են. հարցվածների կեսը կողմ է, որ երեխան հաճախի հանրակրթական դպրոց, մյուս կեսն էլ կողմ է հատուկ դպրոցին, սակայն մտավոր հաշմանդամության դեպքում պատասխանողների ճնշող մեծամասնությունը գտնում է, որ երեխան պետք է գնա հատուկ դպրոց:

11. Հետևյալ պնդումներից ո՞րն է ավելի լավ բնութագրում Ձեր կարծիքը



«Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխան պետք է հաճախի հատուկ դպրոց» պատասխանողների մոտ կեսը նշել է, որ հատուկ դպրոցը տրամադրում է հատուկ ուսուցում և մոտեցում կամ հատուկ դպրոցում կան հարմարեցված միջավայրի պայմաններ: Մեծ չէ տարբերությունն այն մարդկանց միջև, որոնց կարծիքով ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխան պետք է հաճախի հատուկ

դպրոց այլ աշակերտների վատ վերաբերմունքից խուսափելու կամ այլ աշակերտների վրա բացասական ազդեցությունից խուսափելու համար (համապատասխանաբար՝ 8 տոկոս և 6 տոկոս): «Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխան պետք է հաճախի հատուկ դպրոց» պատասխանողների 2 տոկոսն էլ կարծում է, որ հասարակությունը պատրաստ չէ ընդունել նրանց: «Մտավոր հաշմանդամություն ունեցող երեխան պետք է հաճախի հատուկ դպրոց» պատասխանողների մեջ նույնպես ավելի մեծ մաս են կազմում նրանք, որոնց կարծիքով այդ երեխաները պետք է սովորեն հատուկ դպրոցում, որովհետև այն տրամադրում է հատուկ ուսուցում և մոտեցում: Այս դեպքում նույնպես «այլ աշակերտների վատ վերաբերմունքից խուսափել» պատասխան է տվել մոտավորապես նույնքան մարդ, որքան «այլ աշակերտների վրա բացասական ազդեցությունից խուսափել» պատասխան՝ համապատասխանաբար՝ 7 տոկոս և 6 տոկոս (*Տե՛ս գծապատկեր 13)*:

12. Որքանո՞վ է Ձեզ համար ընդունելի կամ ընդունելի չէ, որ Ձեր երեխայի դասարանում լինի հաշմանդամություն ունեցող երեխա



Բոլոր հարցվածների 83 տոկոսն է ընդունելի (միանգամայն և ավելի շուտ ընդունելի) համարում, որ իր երեխայի դասարանում լինի ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխա, իսկ հարցվածների 48 տոկոսն ընդունելի (միանգամայն և ավելի շուտ ընդունելի) է համարում, որ իր երեխայի դասարանում լինի մտավոր հաշմանդամություն ունեցող երեխա (*Տե՛ս գծապատկեր 12*):

13. Ինչո՞ւ պիտի հաշմանդամություն ունեցող երեխան հաճախի հատուկ դպրոց



Գյուղական բնակավայրերում հարցմանը մասնակցածների 75 տոկոսն է ընդունելի (միանգամայն և ավելի շուտ ընդունելի) համարում, որ իր երեխայի դասարանում լինի ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխա, իսկ քաղաքային բնակավայրերում այս ցուցանիշը 87 տոկոս է (*Տե՛ս Հավելված 1-ի գծապատկեր Ա2*):

Ընդունելի լինելու աստիճանը կտրուկ իջնում է, երբ հարցը վերաբերվում է մտավոր հաշմանդամություն ունեցող երեխային: Գյուղաբնակ հարցվածների 48 տոկոսը, քաղաքաբնակների՝ 47 տոկոսն է ընդունելի (միանգամայն և ավելի շուտ ընդունելի) համարում, որ իր երեխայի դասարանում լինի մտավոր հաշմանդամություն ունեցող երեխա (*Տե՛ս Հավելված 1-ի գծապատկեր Ա2*):

Տարիքի հետ վերաբերմունքը փոքր-ինչ փոխվում է: Եթե 18-34 տարեկանների 89 տոկոսն է ընդունելի (միանգամայն և ավելի շուտ ընդունելի) համարում, որ իր երեխայի դասարանում լինի ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխա, ապա 35-49 տարեկանների՝ 87 տոկոսը, 50-64 տարեկանների՝ 77 տոկոսը և 65 ու ավելի տարիք ունեցողների՝ 74 տոկոսը (*Տե՛ս Հավելված 1-ի գծապատկեր Ա3*):

18-34 տարեկանների 55 տոկոսն է ընդունելի (միանգամայն և ավելի շուտ ընդունելի) համարում, որ իր երեխայի դասարանում լինի մտավոր հաշմանդամություն ունեցող երեխա, 35-49 տարեկանների՝ 51 տոկոսը, 50-64 տարեկանների՝ 33 տոկոսը, իսկ 65+ տարեկանների՝ 48 տոկոսը (*Տե՛ս Հավելված 1-ի գծապատկեր Ա4*):

Ավելի բարձր տարիք ունեցող մարդիկ ավելի քիչ են կողմնորոշված այդ հարցում: Եթե 18-34 տարեկանների 1 տոկոսն է հարցին պատասխանել «չգիտեմ», ապա 65 ու բարձր տարիք ունեցողների՝ 6 տոկոսը:

«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱ

Հոդված 24. Կրթությունը

Մասնակից պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքը: Սույն իրավունքն իրականացնելիս մասնակից պետություններն ապահովում են, որ՝
Հաշմանդամություն ունեցող անձանց չմեկուսացնեն ընդհանուր կրթական համակարգից հաշմանդամության պատճառով, և որ հաշմանդամություն ունեցող երեխաները չզրկվեն անվճար ու պարտադիր՝ տարրական կամ միջնակարգ կրթություն ստանալու իրավունքից հաշմանդամության պատճառով:
Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի լինի ներառական, որակյալ ու անվճար՝ տարրական ու միջնակարգ կրթությունը համայնքի այլ անդամների հետ հավասար հիմունքներով:
Ձեռնարկվեն անհատական աջակցությանն ուղղված արդյունավետ միջոցներ այնպիսի միջավայրերում, որոնք ամբողջությամբ ներգրավելու նպատակն իրականացնելուն զուգահեռ նաև առավելագույնս կնպաստեն նրանց ուսումնական ու սոցիալական զարգացմանը:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երեխաների՝ սպորտային և այլ հասարակական միջոցառումների մասնակցության խրախուսումը բոլորը չէ, որ դրական են ընդունում: Պատասխանները տարբերվում են կախված հաշմանդամության տեսակից կամ հարցվածի կրթության աստիճանից:

Հարցվածների ճնշող մեծամասնությունը՝ 87 տոկոսը, ընդունելի է համարում (միանգամայն ընդունելի և ավելի շուտ ընդունելի), որ իր երեխան ունենա ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մոտ ընկեր:

14. Որքանո՞վ է Ձեզ համար ընդունելի կամ ընդունելի չէ, որ Ձեր երեխան ունենա ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մոտ ընկեր



Այս հարցում կրթության մակարդակի աճին զուգընթաց մեծանում է նաև հանդուրժողականությունը: Եթե միջնակարգ կրթություն ունեցողների 12 տոկոսն ընդունելի չի (միանգամայն անընդունելի և ավելի շուտ անընդունելի) համարում, որ իր երեխան ունենա ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մոտ ընկեր, ապա միջին մասնագիտական կրթություն ունեցողների՝ 11 տոկոսը, իսկ բարձրագույն կրթություն ունեցողների 8 տոկոսն է այդպես կարծում:

15. Միանգամայն և ավելի շուտ ընդունելի չէ, որ Ձեր երեխան ունենա ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մոտ ընկեր

Տարիքի աճին զուգընթաց հանդուրժողականությունը նվազում է:

Եթե 18–34 տարեկանների 91 տոկոսն է ընդունելի համարում, որ իր երեխան ունենա ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մոտ ընկեր, ապա 35–49 տարեկանների՝ 89 տոկոսը, 50–64 տարեկանների՝ 85 տոկոսը, իսկ 65+ տարեկանների՝ 78 տոկոսը (*Տե՛ս գծապատկեր 16*):

Գյուղաբնակ հարցվածների 83 տոկոսն է ընդունելի համարում, որ իր երեխան ունենա ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մոտ ընկեր, քաղաքաբնակների դեպքում այս ցուցանիշը 89 տոկոս է (*Տե՛ս Հավելված 1-ի գծապատկեր Ա5*):

16. Միանգամայն և ավելի շուտ ընդունելի է, որ Ձեր երեխան ունենա հաշմանդամություն ունեցող մոտ ընկեր



Հարցվածների կեսից ավելին՝ 58 տոկոսն է ընդունելի համարում (միանգամայն ընդունելի և ավելի շուտ ընդունելի), որ իր երեխան ունենա մտավոր հաշմանդամություն ունեցող մոտ ընկեր, նույնքան էլ համարում են և՛ քաղաքաբնակ, և՛ գյուղաբնակ հարցվածները (*Տե՛ս Հավելված 1-ի գծապատկեր Ա6*): Սակայն մեծ է նաև ընդունելի չէ (միանգամայն անընդունելի և ավելի շուտ անընդունելի) պատասխանողների խումբը՝ 37 տոկոս (*Տե՛ս գծապատկեր 14*):

Մտավոր հաշմանդամության դեպքում կրթության մակարդակի աճին զուգընթաց հանդուրժողականությունը նվազում է: Եթե բարձրագույն կրթություն ունեցողների 43 տոկոսն ընդունելի չի (միանգամայն անընդունելի և ավելի շուտ անընդունելի) համարում, որ իր երեխան ունենա մտավոր հաշմանդամություն ունեցող մոտ ընկեր, ապա միջին մասնագիտական կրթություն ունեցողների 39 տոկոսը և միջնակարգ կրթություն ունեցողների 30 տոկոսն ընդունելի չի համարում, որ իր երեխան ունենա մտավոր հաշմանդամություն ունեցող մոտ ընկեր: Տարրական կրթություն ունեցողները (հարցվածների 2 տոկոսը) ավելի հանդուրժող են. նրանց միայն 21 տոկոսը չէր ցանկանա, որ իր երեխան ունենա մտավոր հաշմանդամություն ունեցող ընկեր:

17. Միանգամայն և ավելի շուտ ընդունելի չէ, որ Ձեր երեխան ունենա մտավոր հաշմանդամություն ունեցող մոտ ընկեր



Տարիքի հետ հանդուրժողականությունը որոշ չափով նվազում է: Եթե 18–34 տարեկանների 63 տոկոսն է ընդունելի համարում, որ իր երեխան ունենա մտավոր հաշմանդամություն ունեցող մոտ ընկեր, ապա 35–49 տարեկանների՝ 61 տոկոսը, 50 և ավելի տարիք ունեցող մարդկանց՝ 52 տոկոսը (*Տե՛ս գծապատկեր 16*):

Հարցին, թե որքանով է ընդունելի կամ ընդունելի չէ, որ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխային ծնողները տանեն միջոցառումների (հարսանիք, ծննդյան տոն և այլն), հարցվածների մեծ մասը պատասխանել է, որ միանգամայն (66 տոկոս) կամ ավելի շուտ (24 տոկոս) ընդունելի է:

18. Որքանո՞վ է Ձեզ համար ընդունելի կամ ընդունելի չէ, որ հաշմանդամություն ունեցող երեխայի ծնողները նրան տանեն միջոցառումների



Ոչ ուժեղ, բայց ուշագրավ փոխկապվածություն կա՝ «որքանով է ընդունելի կամ ընդունելի չէ, որ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխայի ծնողները նրան տանեն միջոցառումների» հարցի

պատասխանի և հարցվածի կողմից ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդ ճանաչելու փաստի միջև:

19. Որքանո՞վ է Ձեզ համար ընդունելի կամ ընդունելի չէ, որ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխայի ծնողները նրան տանեն միջոցառումների



Եթե դիտարկենք կապը հարցվածի տարիքի և պատասխանների միջև՝ նկատելի է, որ տարիքի առաջացմանը զուգահեռ փոքրանում է ընդունելի պատասխանների մասը, սակայն տարբերությունը չի գերազանցում 6 տոկոսային կետը. 18-34 տարիքային խումբ՝ 92 տոկոս, 35-49 տարիքային խումբ՝ 90 տոկոս, 50-64 տարիքային խումբ՝ 88 տոկոս, 65+ տարիքային խումբ՝ 86 տոկոս (*Տես գծապատկեր 21*):

Հարցին վերաբերմունքի տարբերություն՝ պայմանավորված հարցվածի սեռով, չի նկատվում (*Տես Հավելված 1-ի գծապատկեր Ա8*), մինչդեռ նկատելի է տարբերություն՝ պայմանավորված հարցվածի բնակության վայրի տեսակով. եթե քաղաքաբնակ հարցվածների 91 տոկոսն է պատասխանել՝ ընդունելի է, գյուղաբնակների դեպքում ցուցանիշը 85 տոկոս է (*Տես Հավելված 1-ի գծապատկեր Ա9*):

Հարցվածների 63 տոկոսն է ընդունելի (միանգամայն և ավելի շուտ ընդունելի) համարում, որ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխայի ծնողները նրան տանեն միջոցառումների (հարսանիք, ծննդյան տոն, հյուրընկալություն և այլն): Մտավոր հաշմանդամություն ունենալու դեպքում միջոցառումների տանելն ընդունելի չի համարում հարցվածների 34 տոկոսը, ինչը 25 տոկոսային կետով ավելի է, քան ֆիզիկական հաշմանդամության դեպքում (*Տես գծապատկեր 18*):

Եթե վերլուծում ենք հարցի նկատմամբ վերաբերմունքի ու այդ անձի կրթության միջև եղած կապը՝ ստացվում է, որ կրթության ավելի բարձր մակարդակ ունեցող հարցվածները ավելի ընդունելի չեն համարում ծնողների՝ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաներին միջոցառումների տանելը: Այսպես՝ 66 տոկոսն այն հարցվածների, որոնց կրթության ամենաբարձր աստիճանը միջնակարգն է, տվել է «ընդունելի է» պատասխանը, նույն պատասխանն է տվել միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն ունեցողների 61 տոկոսը: Ֆիզիկական հաշմանդամության դեպքում հակառակն է՝ կրթության մակարդակի բարձրացմանը զուգահեռ մեծանում է ընդունելի համարողների մասը՝ համապատասխանաբար 85 տոկոս, 90 տոկոս և 93 տոկոս:

20. Միանգամայն և ավելի շուտ ընդունելի է, որ հաշմանդամություն ունեցող երեխայի ծնողները նրան տանեն միջոցառումների



Ավելի երիտասարդ տարիքի անձինք ավելի շատ են ընդունելի համարում, որ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխայի ծնողները նրան միջոցառումների տանեն: Եթե 18-34 տարեկանների 72 տոկոսն է այդպես համարում, ապա 35-49 տարեկանների՝ 63 տոկոսը, 50-64 տարեկանների՝ 52 տոկոսը, իսկ 65+ տարեկանների՝ 60 տոկոսը:

21. Միանգամայն և ավելի շուտ ընդունելի է, որ հաշմանդամություն ունեցող երեխայի ծնողները նրան տանեն միջոցառումների



Պատասխանների միջև էական տարբերություն չկա ոչ ըստ պատասխանողների՝ քաղաքում կամ գյուղում բնակության (*Տես Հավելված 1-ի գծապատկեր Ա11*), ոչ՝ ըստ հարցվածների սեռի (*Տես Հավելված 1-ի գծապատկեր Ա10)*:

Հաշմանդամություն ունեցող մարդու ճանաչելու և նրան միջոցառումների տանելն ընդունելի համարելու միջև եղած կապը պայմանավորված է հաշմանդամության տեսակով:

22. Որքանո՞վ է Ձեզ համար ընդունելի կամ ընդունելի չէ, որ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխայի ծնողները նրան տանեն միջոցառումների



Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդ ճանաչելը նպաստում է նրան միջոցառումների տանելն ավելի ընդունելի համարելուն: Այսպես՝ վերջինների 97 տոկոսը հարցին պատասխանել է ընդունելի է (միանգամայն ընդունելի՝ 86 տոկոս կամ ավելի շուտ ընդունելի է՝ 11 տոկոս), իսկ 3 տոկոսը՝ միանգամայն ընդունելի չէ:

Ընդունելի լինելն աճում է, երբ հարցվածը ճանաչում է ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդու, իսկ մտավոր հաշմանդամություն ունեցող մարդու ճանաչողները նրան միջոցառումների տանելն ավելի քիչ ընդունելի են համարում (*Տես Հավելված 1-ի գծապատկեր Ա7*):

Սա նման է մի շրջապտույտի, երբ սոցիալականացումն ուղեկցվում է մտերմության հաստատմամբ, ինչը նպաստում է հաշմանդամություն ունեցողների ավելի մեծ սոցիալական ներգրավմանը:

«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱ

Հոդված 19. Անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքը

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց՝ համայնքում ապրելու հավասար իրավունքը՝ մյուսների հետ հավասար հիմունքներով ընտրության հնարավորությամբ, ձեռնարկում են արդյունավետ և համապատասխան միջոցներ՝ օժանդակելու համար հաշմանդամություն ունեցող անձանց՝ այս իրավունքից լիակատար օգտվելուն, նրանց լիարժեք ներգրավվածությանը և մասնակցությանը համայնքում, ինչպես նաև ապահովում են, որ՝
Հաշմանդամություն ունեցող անձինք օգտվեն մի շարք ներտնային, բնակության հետ կապված և համայնքային աջակցության այլ ծառայություններից և ստանան համայնքում ապրելու և ներգրավվելու, ինչպես նաև համայնքից չմեկուսացվելու համար անհրաժեշտ անձնական աջակցություն:
Բնակչության համար նախատեսված համայնքային ծառայությունները և հնարավորությունները հավասարապես հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց և համապատասխանեն նրանց կարիքներին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ

Ա1. Միանգամայն և ավելի շուտ ընդունելի չէ, որ ընտանիքները երեխային հանձնեն մանկատուն՝ մտավոր հաշմանդամություն ունենալու պատճառով

Ա2. Միանգամայն և ավելի շուտ ընդունելի է, որ Ձեր երեխայի դասարանում լինի հաշմանդամություն ունեցող երեխա



Ա3. Միանգամայն և ավելի շուտ ընդունելի է, որ Ձեր երեխայի դասարանում լինի ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխա



Ա4. Միանգամայն և ավելի շուտ ընդունելի է, որ Ձեր երեխայի դասարանում լինի մտավոր հաշմանդամություն ունեցող երեխա



Ա5. Միանգամայն և ավելի շուտ ընդունելի է, որ Ձեր երեխան ունենա ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մոտ ընկեր

Ա6. Միանգամայն և ավելի շուտ ընդունելի է, որ Ձեր երեխան ունենա մտավոր հաշմանդամություն ունեցող մոտ ընկեր

Ա7. Որքանո՞վ է Ձեզ համար ընդունելի կամ ընդունելի չէ, որ հաշմանդամություն ունեցող երեխայի ծնողները նրան տանեն միջոցառումների



Ա8. Որքանո՞վ է Ձեզ համար ընդունելի կամ ընդունելի չէ, որ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխայի ծնողները նրան տանեն միջոցառումների



Ա9. Որքանո՞վ է Ձեզ համար ընդունելի կամ ընդունելի չէ, որ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխայի ծնողները նրան տանեն միջոցառումների



Ա10. Որքանո՞վ է Ձեզ համար ընդունելի կամ ընդունելի չէ, որ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխայի ծնողները նրան տանեն միջոցառումների



Ա11. Որքանո՞վ է Ձեզ համար ընդունելի կամ ընդունելի չէ, որ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխայի ծնողները նրան տանեն միջոցառումների



ՀԱՎԵԼՎԱԾ 2: ՀԱՐՑԱՇԱՐ

1. Նշեք Ձեր ծննդյան տարեթիվը [ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍ-ԽԱՆԸ]

2. Գրանցել հարցվողի սեռը [ՉԿԱՐԴԱԼ ՀԱՐՑԸ, ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ]
- Արական
- Իգական

3. Նշեք, խնդրեմ, Ձեր կրթության ամենաբարձր աստիճանը, հաշվի առնելով վերջին ուսումնական հաստատությունը, որն ավարտել եք [ՉԿԱՐԴԱԼ ՏԱԲԵՐԱԿՆԵՐԸ]
- Տարրական կրթություն չունեմ
- Տարրական կրթություն
- Միջնակարգ
- Ավագ
- Միջին մասնագիտական
- Բարձրագույն
- Հետբուհական
- Այլ [ՆՇԵԼ] _____
- *Չգիտեմ*
- *Հրաժարվում եմ պատասխանել*

4. Կասեք՝ գյուղ ենք զանգել, թե՞ քաղաք
- Գյուղ
- Քաղաք

5. Ձեր ընտանիքում կա՞ մինչև 18 տարեկան երեխա: [ԵԹԵ ՊԱՏԱՍԽԱՆՆ Է ՈՉ՝ ԱՆՑՆԵԼ ՀԱՐՑ 7-ԻՆ]
- Այո
- Ոչ
- *Չգիտեմ*
- *Հրաժարվում եմ պատասխանել*

6. Նշեք Ձեր և այդ երեխայի կապը:
- Հարցվողի երեխա
- Հարցվողի թոռ
- Հարցվողի քույր, եղբայր
- Հարցվողի քրոջ/եղբոր երեխա
- Հարցվողի զարմիկ (հորաքրոջ/մորաքրոջ, քեռու/հորեղբոր երեխա)
- Այլ [ՆՇԵԼ]
- *Չգիտեմ*
- *Հրաժարվում եմ պատասխանել*
- *Այս հարցին չի պատասխանել*

15. Հետևյալ երկու պնդումներից ո՞րն է Ձեզ առավել հոգեհարազատ (ավելի լավ է բնութագրում Ձեր կարծիքը)
- Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխան պետք է հաճախի հանրակրթական դպրոց
- Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխան պետք է հաճախի հատուկ դպրոց
- *Չգիտեմ*
- *Հրաժարվում եմ պատասխանել*

16. Եթե պատասխանն է «հատուկ դպրոց»՝ հարցնել՝ ինչու [ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ]_____

17. Հետևյալ երկու պնդումներից ո՞րն է Ձեզ առավել հոգեհարազատ (ավելի լավ է բնութագրում Ձեր կարծիքը)
- Մտավոր հաշմանդամություն ունեցող երեխան պետք է հաճախի հանրակրթական դպրոց
- Մտավոր հաշմանդամություն ունեցող երեխան պետք է հաճախի հատուկ դպրոց
- *Չգիտեմ*
- *Հրաժարվում եմ պատասխանել*

18. Եթե պատասխանն է «հատուկ դպրոց»՝ հարցնել՝ ինչու [ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ]_____

19. Հետևյալ երկու պնդումներից ո՞րն է Ձեզ առավել հոգեհարազատ (ավելի լավ է բնութագրում Ձեր կարծիքը)
- Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխան պետք է լիովին ներգրավված լինի հասարակության մեջ
- Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխան պետք է հասարակությունից առանձնացվի
- *Չգիտեմ*
- *Հրաժարվում եմ պատասխանել*

20. Հետևյալ երկու պնդումներից ո՞րն է Ձեզ առավել հոգեհարազատ (ավելի լավ է բնութագրում Ձեր կարծիքը)
- Մտավոր հաշմանդամություն ունեցող երեխան պետք է լիովին ներգրավված լինի հասարակության մեջ
- Մտավոր հաշմանդամություն ունեցող երեխան պետք է հասարակությունից առանձնացվի
- *Չգիտեմ*
- *Հրաժարվում եմ պատասխանել*

21. Դուք ճանաչո՞ւմ եք ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդու [ԵԹԵ ՊԱՏԱՍԽԱՆՆ Է ՈՉ՝ ԱՆՑՆԵԼ ՀԱՐՑ 24-ԻՆ]
- Այո
- Ոչ
- *Չգիտեմ*
- *Հրաժարվում եմ պատասխանել*

Որքանո՞վ է Ձեզ համար ընդունելի, կամ ընդունելի չէ, որ	Միանգամայն ընդունելի է	Ավելի շուտ ընդունելի է	Ավելի շուտ ընդունելի չէ	Միանգամայն ընդունելի չէ	Չգիտեմ	Հրաժարվում եմ պատասխանել
7. *ֆիզիկական* հաշմանդամություն ունեցող երեխայի ծնողները նրան տանեն միջոցառումների (հարսանիք, ծննդյան տոն, հյուրընկալություն և այլն)						
8. *մտավոր* հաշմանդամություն ունեցող երեխայի ծնողները նրան տանեն միջոցառումների (հարսանիք, ծննդյան տոն, հյուրընկալություն և այլն)						
9. Ձեր երեխան ունենա *ֆիզիկական* հաշմանդամություն ունեցող մոտ ընկեր						
10. Ձեր երեխան ունենա *մտավոր* հաշմանդամություն ունեցող մոտ ընկեր						
11. Ձեր երեխայի դասարանում լինի *ֆիզիկական* հաշմանդամություն ունեցող երեխա						
12. Ձեր երեխայի դասարանում լինի *մտավոր* հաշմանդամություն ունեցող երեխա						
13. ընտանիքները հանձնեն երեխային մանկատուն՝ *ֆիզիկական* հաշմանդամություն ունենալու պատճառով						
14. ընտանիքները հանձնեն երեխային մանկատուն՝ *մտավոր* հաշմանդամություն ունենալու պատճառով						

22. Ձեր և այդ մարդու կապը [ՉԿԱՐԴԱԼ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ԵԹԵ ՀԱՐՑՎՈՂԸ ՃԱՆԱՉՈՒՄ Է ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՄԱՐԴԿԱՆՑ՝ ԳՐԱՆՑԵԼ ԱՄԵՆԱՄՈՏ ՄԱՐԴՈՒ ՀԵՏ ԿԱՊԸ]
- Տնային տնտեսության անդամ
- Ընտանիքի անդամ
- Բարեկամ
- Հարևան
- Ընկեր
- Ծանոթ
- Չգիտեմ
- *Հրաժարվում եմ պատասխանել*
- *Այս հարցին չի պատասխանել*

23. Ե՞րբ եք վերջին անգամ տեսել նրան /ամենամոտ մարդուն/
- Ավելի քիչ, քան մեկ շաբաթ առաջ
- Մեկ շաբաթից մինչև մեկ ամիս առաջ
- Մեկ ամսից մինչև վեց ամիս առաջ
- Վեց ամսից ավելի ուշ
- Չգիտեմ
- Հրաժարվում եմ պատասխանել
- Այս հարցին չի պատասխանել

24. Դուք ճանաչո՞ւմ եք մտավոր հաշմանդամություն ունեցող մարդու [ԵԹԵ ՊԱՏԱՍԽԱՆՆ Է ՈՉ՝ ԱՎԱՐՏԵԼ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ]
- Այո
- Ոչ
- Չգիտեմ
- Հրաժարվում եմ պատասխանել

25. Ձեր և այդ մարդու կապը [ՉԿԱՐԴԱԼ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ԵԹԵ ՀԱՐՑՎՈՂԸ ՃԱՆԱՉՈՒՄ Է ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՄԱՐԴԿԱՆՑ՝ ԳՐԱՆՑԵԼ ԱՄԵՆԱՄՈՏ ՄԱՐԴՈՒ ՀԵՏ ԿԱՊԸ]
- Տնային տնտեսության անդամ
- Ընտանիքի անդամ
- Բարեկամ
- Հարևան
- Ընկեր
- Ծանոթ
- Չգիտեմ
- Հրաժարվում եմ պատասխանել
- Այս հարցին չի պատասխանել

26. Ե՞րբ եք վերջին անգամ տեսել նրան /ամենամոտ մարդուն/
- Ավելի քիչ, քան մեկ շաբաթ առաջ
- Մեկ շաբաթից մինչև մեկ ամիս առաջ
- Մեկ ամսից մինչև վեց ամիս առաջ
- Վեց ամսից ավելի ուշ
- Չգիտեմ
- Հրաժարվում եմ պատասխանել
- Այս հարցին չի պատասխանել

Հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառման հանրային արշավ

Հայաստանը ձեռնամուխ է եղել երեխայի խնամքի հաստատությունների վերակազմավորման գործընթացի իրականացմանը, որը պահանջում է այլընտրանքային համայնքահեն խնամքի մոդելների ստեղծում և կայացում: Գործընթացն ուղղված է երեխաների իրավունքների պաշտպանությանը, մասնավորապես ընտանիքում դաստիարակվելուն, ծնողների խնամքին ապավինելուն և հասարակությունում որպես լիիրավ անդամ ընդգրկվելուն: Սա հատկապես կարևոր է խոցելի երեխաների, ներառյալ հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Այս գործընթացը նաև ենթադրում է Հայաստանում ներառական դպրոցների ընդլայնում:

Երեխաներին ուղղված ծառայությունների վերակազմավորումն իրենից ենթադրում է ոչ թե պարզապես հաստատություններից երեխաների դուրսբերում, այլ առավել հիմնարար, համակարգված, քաղաքականությամբ առաջնորդվող փոփոխություն՝ յուրաքանչյուր երեխայի համար՝ անկախ իր հնարավորություններից և կարիքներից, սոցիալական ներառում ու համապատասխան հնարավորությունների ապահովում:

Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) տեսլականն է, որպեսզի բոլոր երեխաները հաճախեն հանրակրթական դպրոց և օգտվեն իրենց կարիքների վրա հիմնված համայնքահեն ծառայություններից, ինչպես նաև որպեսզի բոլոր երեխաները, որոնք մինչ այդ գտնվում էին հաստատություններում:

Սույն հարցման արդյունքների և ինստիտուցիոնալ վերակազմավորման օրակարգի ենթատեքստում անհրաժեշտ է ստեղծել հանրային աջակցություն և դրական վերաբերմունք հաշմանդամություն ունեցող երեխաների հանդեպ և շեշտել ներառականության արժեքների կարևորությունը հասարակության զարգացման գործում:

«Կարող ենք միասին»

2014թ. հուլիսին ՅՈՒՆԻՍԵՖ-ը ՀՀ կառավարության և երեխայի իրավունքների ոլորտի տեղական և միջազգային մի շարք կազմակերպությունների աջակցությամբ մեկնարկեց հաշմանդամություն

ունեցող երեխաների սոցիալական ներառմանն ուղղված հանրային արշավ, որի **նպատակներն են՝**

- բարձրացնել իրազեկությունը հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների մասին,
- խթանել ներառման և «կրթություն բոլոր երեխաների համար» գաղափարների տարածումը,
- նպաստել հաշմանդամություն ունեցող երեխաների՝ որպես հասարակության լիարժեք անդամների ընդունմանն ու նրանց դերի կարևորմանը երկրի զարգացման գործում,
- մատնանշել հաշմանդամություն ունեցող երեխաների կարողությունները կյանքի տարբեր բնագավառներում՝ կրթությունից մինչև սպորտ, արվեստ և այլն:

Արշավը կտևի երեք տարի՝ հիմքը դնելով Երևանում և աստիճանաբար տարածվելով մարզեր ու համայնքներ և կունենա **երեք բաղադրիչ՝**

- հանրային միջոցառումների բաղադրիչի շրջանակում կապահովվի շփում հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաների և երիտասարդների միջև,
- մեդիա բաղադրիչի շրջանակում կիրականացվեն մի շարք լուսաբանման գործողություններ,
- կլոր-սեղան քննարկումների բաղադրիչի շրջանակում կիրականցվի հանդիպումների շարք թիրախային խմբերի հետ, որոնց ընթացքում կքննարկվի ներառական կենսակերպի և արժեքների կարևորությունը:

Ակնկալվող արդյունքները

- Հաշմանդամություն ունեցող երեխաների խնդիրների և իրավունքների նկատմամբ հասարակության առավել նպաստավոր վերաբերմունքի ձևավորում, հատկապես հանրակրթության ոլորտում:
- Հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաների ծնողների կողմից իրենց երեխաների իրավունքների, մասնավորապես՝ հիմնական դպրոցում ներառված լինելու և դպրոց հաճախելու իրավունքի գիտակցում:
- Հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ծնողների՝ իրենց ներառված լինելու իրավունքի պահանջատերը դառնալու պատրաստակամության բարձրացում և երեխաների՝ համայնքային կյանքում մասնակցության խթանում:
- Հանրակրթական դպրոցի աշխատակիցների շահագրգռվածության բարձրացում՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին ընդունելու և ներառական դպրոց դառնալու հարցում:
- Որոշում կայացնողների ու քաղաքականություն մշակողների կողմից հաշմանդամություն ունեցող երեխաների ներառման առավելությունների գիտակցում:

Արշավի աշխատանքներին և ձեռքբերումներին կարող եք հետևել սոցիալական մեդիայի միջոցով՝ www.facebook.com/togetherwecanarmenia